CRC ARMENIA

Ամփոփիչ զեկույց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅԱՑՄԱՆՆ ԸՆԴԱՌԱՋ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Ամփոփիչ զեկույց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅԱՑՄԱՆՆ ԸՆԴԱՌԱՋ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Երևան 2023

«Հետազոտական գործունակ համայնքի կայացմանն ընդառաջ. գործունեություններ, արդյունքներ, հեռանկարներ» ամփոփիչ զեկույցը պատրաստվել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան հիմնադրամի կողմից՝ Ազգային ժողովրդավարության ինստիտուտի (ԱԺԻ) ֆինանսավորմամբ: Այս զեկույցն ստեղծվել է հասարակագիտական և հումանիտար գիտություններում համայնքի առջև ծառացած մարտահրավերներն ու խնդիրները բացահայտելու և համագործակցային եղանակով դրանց լուծումները գտնելու նպատակով: Զեկույցի բովանդակությունը միմիայն հեղինակների պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱԺԻ տեսակետները:

Զեկույցի կամ դրա առանձին մասերի վերահրատարակումը կամ վերարտադրությունը էլեկտրոնային կամ տպագիր տարբերակներով պետք է իրականացվի պատշաճ մեջբերումներով:

Մեջբերման օրինակ.
Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ. (2023), *Հետազոտական գործունակ համայնքի կայացմանն ընդառաջ. գործունեություններ, արդյունքներ, հեռանկարներ. Ամփոփիչ զեկույց*, Երևան, Ազգային ժողովրդավարության ինստիտուտ:

© Բոլոր իրավունքները պաշտպանված են: ՀՌԿԿ-Հայաստան: 2023

Կապ. crrc@crrc.am | crrc.am

Հեղինակներ

Նիկոլ Մարգարյան

Սեդա Անանյան

Խմբագիրներ

Սոնա Բալասանյան

Լիլիթ Եզեկյան

Հայկ Սմբատյան

Մարիամ Առաքելյան

Տիգրան Մելիքյան

Ծրագրային խումբ

Աշոտ Խաչատրյան

Մարիամ Բաբայան

Սրբուհի Միչիկյան

Մանե Գասպարյան

Անի Ավետիսյան

Արման Հարոյան

Արուսյակ Ոսկանյան

Հասմիկ Թամամյան

Ձևավորող

Մանե Արշալույսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ ԵՎ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ 4

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ..... 8

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ 11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 21

ՆՊԱՏԱԿ ԵՎ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ

Սույն զեկույցում ամփոփվում են ԱՄՆ Ազգային ժողովրդավարության ինստիտուտի (ԱԺԻ/NDI) ֆինանսավորմամբ և ՀՌԿԿ–Հայաստան հիմնադրամի կողմից 2022-2023 թթ. իրականացված բազմաբաղադրիչ ծրագրի՝ «Հետազոտական պրակտիկայի համայնք»[1] վերտառությամբ ենթածրագրում ներառվող գործողությունները և դրանց արդյունքները:

Ենթածրագիրն, ըստ էության, շարունակությունն է Հայաստանում հետազոտական համայնքի զարգացման նպատակով իրականացվող ջանքերի և գործողությունների, որոնք նախաձեռնվել էին դեռևս 2021 թ. Սոցիոսկոպ ՀԿ-ի կողմից: Այնուհետ, 2021-2022 թթ. շարունակվել և զարգացվել է Սոցիես փորձագիտական կենտրոն ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության արդյունքում և Էստաֆետի տրամաբանությամբ՝ 2022 թ. փոխանցվել ՀՌԿԿ – Հայաստան հիմնադրամին: Ստանձնելով այդ կարևոր առաքելությունը՝ ՀՌԿԿ-Հայաստանը հատկապես կարևորել է 3-րդ «Հետազոտական Էթիկայի ֆորումի» եզրափակիչ արձանագրության մեջ ամրագրված հետևյալ ակնկալիքը. «*Հետազոտական համայնքի ակտիվացումը, երկխոսության հարթակների ձևավորումը կարող են իրական հնարավորություն դառնալ հետազոտական Էթիկայի սկզբունքները պահպանելու համար: Հետազոտական համայնքը պետք է դիտարկվի որպես չափանիշներ սահմանող, բանավիճող և ոչ պաշտոնական վերահսկող մարմին: Ոչ պակաս կարևոր է գործընկերների հետ սոցիալականացումը և անկախության մշակույթի զարգացումը՝ խուսափելով անմիջական վերահսկողական, կարգապահական, ֆորմալ ընթացակարգերից*»:

Առաջնորդվելով հղված պարբերության մեջ ամփոփված տեսլականով, ինչպես նաև հիմնվելով նախորդ գործունեությունների ընթացքում արձանագրված միտումների և ձեռքբերումների վրա՝ ՀՌԿԿ-Հայաստանը սույն ենթածրագրի իրականացման ընթացքում նպատակ է հետապնդել նպաստելու.

- հետազոտական համայնքի անդամների միջև հաղորդակցության ինտենսիվացմանը և խորացմանը,
- կազմակերպվող միջոցառումներում հետազոտական գործունեությանն առնչվող դերակատարների ավելի բազմապրոֆիլ ու բազմաքանակ ներկայության ապահովմանը,
- հետազոտական համայնքի առջև ծառացած մարտահրավերների և խնդիրների մասին հանրային տեղեկացվածության բարձրացմանը,
- հետազոտական համայնքի պատրաստակամության և կարողությունների մեծացմանը՝ հետազոտության մեջ առկա ընդհանուր մարտահրավերներն ու խնդիրները համատեղ լուծելու ակնկալիքով:

1. ԱԺԻ-ի կողմից ֆինանսավորված բազմաբաղադրիչ ծրագրի ամբողջական անվանումն է «Ֆոկուս խմբային քննարկումներ, համազգային ներկայացուցչական հարցում և հետազոտական պրակտիկայի համայնք»:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(միջոցառումներ և մեթոդաբանություն)

Առաջադրված նպատակներին հասնելու համար ՀՌԿԿ-ն նախատեսել և իրականացրել է հետևյալ միջոցառումները.

- *մտագրոհ-քննարկումներ՝* հետազոտական համայնքի ներկայացուցիչների հետ,
- *«Բաց հարց» փողքասթ՝* հետազոտական պրակտիկաներին առնչակից կազմակերպությունների ներկայացուցիչների և անհատ հետազոտողների հետ,
- հետազոտական համայնքի ներկայացուցիչների ընդլայնված կազմով ֆորումի անցկացում,
- իրականացված գործունեություններից քաղված դասերի ամփոփում՝ ամփոփիչ արձանագրությունում և վերջինիս տարածում՝ հետազոտական համայնքի մասնակիցների շրջանում:

Մտագրոհ-քննարկումներ. երևան հանելով հիմնախնդիրները

Մտագրոհ-քննարկումների նպատակն է եղել հետազոտական պրակտիկաներում ներգրավված կազմակերպությունների ներկայացուցիչների և անհատ հետազոտողների օգնությամբ հետազոտական պրակտիկաներում հանդիպող որոշակի հիմնախնդիրների և լուծումների նույնականացումը, ապա նաև քննարկումների միջոցով համագործակցության խթանումը: Դրանով պայմանավորված՝ մտագրոհ-քննարկումները չեն ունեցել հստակ կառուցվածք: Դրանք ուղիղ իմաստով չեն եղել ֆոկուս խմբային քննարկումներ կամ որոշակի խնդիրների շուրջ լուծումներ գտնելու համար կազմակերպվող դասական մտագրոհներ: Այս ենթածրագրում մտագրոհ-քննարկումները որոշակի խնդիրների շուրջ ազատ զրուցելու, բանավիճելու հարթակ է եղել: Դա ենթադրում է հետևյալ պայմանները. քննարկման մասնակիցներն իրենք կարող էին հընթացս առաջ քաշել գաղափարներ, առարկել կամ համաձայնել միմյանց հետ՝ առանց մոդերատորի ակտիվ մասնակցության: Մոդերատորի դերակատարությունը հիմնականում սահմանափակվել է քննարկման մասնակիցների կարծիք հնչեցնելու իրավունքն ապահովելու և քննարկման համար հատկացված ժամանակին հետևելու պարտականության մեջ:

Նախատեսված մտագրոհ-քննարկումների մյուս առանձնահատկությունն այն է, որ հաջորդ քննարկումների թեմաները և, առավելապես, դրանց ենթահարցերը նախօրոք հստակությամբ որոշարկված չեն եղել: Վերջիններս հայտնվել են և կարևորվել նախորդած քննարկումների ընթացքում կամ ընթացող քննարկման ժամանակ: Նշված եղանակով՝ ծրագրային առաջարկում մտագրոհ-քննարկումների համար նախատեսված 19 «հում» թեմաներից ընտրվել են առավել ակտուալ 9 թեմաները, որոնք քննարկման առարկա են դարձել հետազոտական գործունեությանն առնչվող դերակատարների հետ 9 մտագրոհ-քննարկումների ընթացքում:

Մտագրոհ-քննարկումներում արծարծված 9 հիմնախնդիրը.

1. արդյո՞ք հանրային կարծիքի հարցումները աղավաղում են հետազոտական դաշտը,
2. հասկանա՞լ, թե փոխել իրականությունը. որտե՞ղ է սկսվում և ավարտվում հետազոտողի դերը,
3. դոնոր-հետազոտական կազմակերպություն արդյունավետ համագործակցության բանալին,
4. ինչու՞ են տվյալները մնում դարակներում. ինչպե՞ս օգտագործել հետազոտության պոտենցիալը,
5. ի՞նչ անի մասնագիտական համայնքը հետազոտական կրթությունը բարելավելու ուղղությամբ,
6. նկարագրական վերլուծությունից անդին. տվյալների հաղորդակցման մարտահրավերները,
7. միջդիսցիպլինար համագործակցություն. ուսումնասիրելով հասարակությունը միասին,
8. «Բարև՛ ձեզ, մենք հարցում ենք իրականացնում...»,
9. հետազոտական համայնք. մրցակցությո՞ն, թե համագործակցություն:

«Բաց հարց» փոդքասթ. ձևակերպելով հիմնախնդիրները

Մտագրոհ-քննարկումների ընթացքում նույնականացված առավել ակտուալ հիմնախնդիրների և դրանց լուծումների հանրայնացման ու հանրային խնդրականացման նպատակով Բուն TV-ի հետ համատեղ նկարահանվել են «*Բաց հարց*» խորագրով փոդքասթի 9 թեմատիկ էպիզոդներ՝ հետազոտական պրակտիկաներում ներգրավված կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Փոդքասթի թեմաները դուրս են բերվել մտագրոհ-քննարկումների ընթացքում խնդրականացված մարտահրավերներից և հարցադրումներից: Փոդքասթում քննարկված մարտահրավերների և դրանց լուծման հնարավոր ուղիների մասին առավել լայն տեղեկացվածություն ապահովելու նպատակով Բուն TV-ի հետ համատեղ պատրաստվել են յուրաքանչյուր փոդքասթին վերաբերող հակիրճ տեքստային արձագանքներ:

«*Բաց հարց*» փոդքասթի 9-ը թեմաներն են.

1. հանրային կարծիք գոյություն (չ)ունի՞,
2. հետազոտողի դերը. հասկանա՞լ, թե փոխել,
3. ինչպե՞ս (չ)ֆինանսավորել հետազոտությունը,
4. ինչու՞ են տվյալները մնում դարակներում,
5. ինչպե՞ս (չ)պատրաստել հետազոտողներ,
6. ինչպե՞ս (չ)վերլուծել,
7. ինչպե՞ս (չ)համագործակցել,
8. ինչպե՞ս (չ)թակել մարդկանց դռները,
9. ինչպե՞ս (չ)մրցակցել:

Ֆորում. փնտրելով հիմնախնդիրների լուծումներ

Մտագրոհ քննարկումների և փոդքասթի էպիզոդների արդյունքների նախնական ամփոփման, փորձաքննության և լուծումների պոտենցիալ ճանապարհների որոնման նպատակով իրականացվել է հետազոտական համայնքի ներկայացուցիչների ընդլայնված կազմով հետազոտական ֆորում («*Սովորելով միմյանցից*. 4-րդ հետազոտական ֆորում» խորագրով), որի առանցքը նույնպես կազմել են որոշակի թեմաների շուրջ քննարկումները: Ընդհանուր առմամբ քննարկման են արժանացել 5 թեմաներ, որոնց ընտրությունն իրականացվել է մասնակիցների շրջանում նախապես անցկացված հարցումների արդյունքում:

Ընտրված 5 թեմաների քննարկումներն իրականացվել են «*Շատ կլոր սեղաններ*» սկզբունքով, որի էությունը քննարկվող թեմաներին համաժողովի բոլոր ներկաների համաժամանակյա մասնակցության ապահովումն է՝ անկախ այն հանգամանքից՝ մասնակիցները թեմայի քննարկման պահին նստած են կլոր սեղանի շուրջ, քննարկմանը հետևում են առաջին շարքերից, թե սրահի այլ հատվածներից: Անմիջապես «կլոր սեղանների» շուրջ չգտնվող մասնակիցները հնարավորություն են ունեցել իրենց դիտարկումներն ու առաջարկները ներկայացնել ֆորումի վիրտուալ սենյակում, որը ուղիղ հեռարձակմամբ տեսանելի է եղել սրահում տեղադրված թվային հեռուստաէկրանի վրա:

Ֆորումի ընթացքում ձևավորված դիտարկումները և առաջարկները ցուցակագրելու նպատակով միջոցառումն ավարտվել է ամփոփիչ ռեֆլեքսիաների քննարկմամբ:

Ֆորումի ընթացքում քննարկված 5 թեմաները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

1. Մեր երկրում ի սկզբանե հետազոտողի մասնագիտությունը սխալ է դասավանդվում, հետևաբար խնդիրը մասնագետ կրթելու, պատրաստելու գործընթացի մեջ է:
2. Հետազոտողի քաղաքական, արժեքային, նորմատիվ, գաղափարախոսական հայացքները շատ են ազդում հետազոտության որակի վրա:
3. Հետազոտական վերլուծությունները հաճախ սահմանափակվում են տվյալների «պասիվ» նկարագրությամբ՝ առանց խորքային վերլուծական մեկնաբանումների, ինչը պարարտ հող է ստեղծում տվյալների թյուրըմբռման և մանիպուլյացիայի համար:
4. Տվյալները և հետազոտությունների ներուժը բավարար չափով չեն օգտագործվում կոնկրետ և պրակտիկ նշանակության խնդիրներ լուծելու համար:
5. Հասարակագիտական և հումանիտար հետազոտողները միասին ավելի լավ կարող են «տեսնել» հասարակությունը, բայց գրեթե չեն համագործակցում միմյանց հետ:

Կարևոր ենք համարում շեշտադրել, որ հիմնախնդիրները ձևակերպվել են հետազոտողների հետ խմբային մտագրոհների արդյունքում՝ ՀՌԿԿ-Հայաստանի և Ազգային ժողովրդավարության ինստիտուտի մեկամյա համատեղ ծրագրի շրջանակներում: Դրանք դուրս են բերվել մտագրոհների մասնակիցների դիտարկումներից և հիմնականում ներկայացվում են առանց խմբագրման: Դուրս բերված ձևակերպումները ունեն պայմանական/խորհրդանշանային բնույթ և պարտադիր չէ, որ միանշանակորեն համընկնեն համայնքի այլ ներկայացուցիչների ընկալումներին: Այս պարագայում առավել կարևոր են այն հարցադրումներն ու առաջարկները որոնք բխեցվում են հիմնախնդիրներից և որոնց շուրջ դրսևորվել է ընդհանուր փոխըմբռնում: Ասվածը վերաբերում է նաև ենթահիմնախնդիրներին և դրանց հաղթահարման նպատակով մասնակիցների կողմից արված առաջարկներին:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

«Շատ թե քիչ»-ն ավելի շատ է, քան՝ «քիչ թե շատ»-ը[2]
(More or Less is More than Less or More)

Ավելի շատ մասնակիցներ, ավելի շատ ոլորտներ

Ընդհանուր առմամբ 3 տարբեր ձևաչափերով կազմակերպված քննարկումներին (մտագրոհ, փոդքասթ, ֆորում) մասնակցել են 18 (17 ոչ պետական և 1 պետական[3]) հետազոտական կազմակերպությունների, 4 բուհական հաստատությունների, 13 դրամաշնորհ տրամադրող կազմակերպությունների (այդ թվում՝ 3 միջազգային կառույցների), 2 պետական կառույցների (Վիճակագրության պետական կոմիտե, Աշխատանքի և Սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ) ներկայացուցիչներ, 1 ՁԼՄ, 1 բանկային, 1 PR ոլորտի, 2 ոչ հետազոտական ՀԿ-ների ներկայացուցիչներ, 2 անկախ հետազոտողներ: Միասին վերցրած՝ բոլոր միջոցառումներին մասնակցել են հետազոտական համայնքի 71 ներկայացուցիչ: Նրանցից 11-ը միաժամանակ մասնակցել է միջոցառումների երեք ձևաչափերից երկուսին կամ երեքին: Ներկաների մասնագիտական կազմը ներառում է սոցիոլոգներ, սոցիալական աշխատողներ, մարդաբաններ, տնտեսագետներ, վիճակագիրներ, փիլիսոփաներ, լեզվաբաններ, լրագրողներ, միջազգայնագետներ, արևելագետներ, քաղաքագետներ, կառավարման և կրթության ոլորտի փորձագետներ: Մասնակիցները խոստովանել են, որ երբևէ չեն մասնակցել այնպիսի քննարկման, որին ներկա են գտնվել նման բազմազան ու բազմաքանակ կազմով հետազոտողներ:

Ավելի շատ հիմնախնդիրներ, ավելի շատ մեկնաբանություններ, ավելի շատ լուծումներ

Նման ընդլայնված և բազմազան կազմով բազմակողմ քննարկումների կազմակերպումը

2. «Քիչ թե շատ»-ը հայաստանցիների ընկալումներում նույնականացվում է հարմարվողական (յոլա գնալու) վիճակին: Տվյալ համատեքստում այն վերաբերում է հետազոտական պրակտիկաներում գոյություն ունեցող հիմնախնդիրների հետ հաշտվելուն, լավագույն դեպքում ինքնուրույն ուժերով ու կապերով հաղթահարելու փորձերին, ինչը հաճախ պայմանավորված է միայնակության, ոչ բավարար կարողություններ ունենալու զգացողության հետ: Այնինչ, հետազոտական համայնքի անդամների հետ հաճախակի շփումները, խնդիրների մասին համակողմանի տեղեկացվածությունը, կառուցողական համագործակցությունը և այլն, կարող են հանգեցնել ոչ միայն միայնակության և անկարողության զգացողության հաղթահարմանը, այլև հետազոտական գործունեության համար ավելի բարենպաստ միջավայր և պայմաններ ձևավորելուն, ավելի շատ նորարարական գաղափարներ իրականացնելուն: Սույն ասացվածքը հղելու գաղափարն առաջացավ 4-րդ ֆորումի մասնակիցներից մեկի այն դիտարկումից, թե. «Հիմա շատ թե քիչ հավատում եմ, որ ճիշտ ճանապարհով ենք գնում»:

3. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ:

թույլ տվեց նույնականացնել բազմաթիվ խնդիրներ, որոնց մի մասը ՀՌԿԿ-Հայաստանի հետազոտական թիմը չէր նախատեսել և չէր դիտարկել որպես քննարկումների կարիք ունեցող թեմաներ: Մյուս կողմից, քննարկումների ընթացքում մասնակիցները անդրադարձան ոչ միայն արդեն ծանոթ հիմնախնդիրների, որոնց մեծ մասի վերաբերյալ հետազոտողները բարձրաձայնում են տարբեր հարթակներում, այլև այնպիսի խնդիրների, որոնք դժվար նույնականացվող են կամ բավարար չափով ուշադրության չեն արժանանում: Օրինակ, շատ հետազոտողներ դժգոհում են որակյալ հարցազրուցավարների բացակայությունից, խոսում հարցազրուցավարներ կրթելու խնդիրներից՝ մեղադրանքներն ուղղելով տարբեր հասցեներով, բայց որպես պատճառ չի դիտարկվում նրանց ցածր ֆինանսավորման խնդիրը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ խնդիրը նախկինում չի բարձրաձայնվել հարցազրուցավարների դիրքից:

Մեկ այլ կարևոր հանգամանք էր քննարկումներին մասնակից տարբեր դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների՝ իրենց հասցեին հաճախակի հնչեցվող քննադատությունների վերաբերյալ հակափաստարկների ներկայացումը, որոնց, մեծ մասամբ, անհաղորդ են հետազոտական պրակտիկաների մասնակիցները:

Կազմակերպված քննարկումներում տարբեր ոլորտների և տարբեր կարգավիճակներ զբաղեցնող ակտորների ներգրավումը թույլ տվեց ոչ միայն նույնականացնել հետազոտական համայնքին առնչվող խնդիրների ավելի լայն սպեկտր, այլև ցուցակագրել ավելի բազմազան մեկնաբանություններ ու լուծումներ, որոնք, ըստ էության, վկայում են հիմնախնդիրներին տարբեր դիտակետերից նայելու, դրանք տարբեր կերպ ընկալելու հանգամանքի մասին: Քննարկումների մասնակիցների բազմաքանակ ու բազմազան կազմը թույլ տվեց նաև ցուցակագրել հիմնախնդիրների ավելի շատ լուծումների սցենարներ, ինչը, անշուշտ, մեծացնում է առավել արդյունավետ լուծումներ գտնելու հնարավորությունը:

Ավելի կոնկրետ ձևակերպումներ

Իրականացված քննարկումների շարժընթացի դիտարկումը թույլ է տվել նկատել, որ հիմնախնդիրների նկարագրությունները, դրանց առիթով մեկնաբանությունները և բացատրությունները, ինչպես նաև լուծումներին վերաբերող առաջարկները միտում ունեն ընդհանրական ձևակերպումներից ավելի կոնկրետ ձևակերպումների վերածվելու: Այսինքն՝ դրանցում ավելի հստակ են նույնականացվում հիմնախնդիրների պատճառները, գործառնության շրջանակները, հաղթահարման եղանակները, ակնկալվող արդյունքները, հնարավոր հանձնառու ակտորները և այլն: Այդ միտումը հատկապես ակներև է փողքասթի և ֆորումի շրջանակներում կազմակերպված քննարկումներում:

Ավելի լայն տեղեկացվածություն

Հետազոտական պրակտիկաներին առնչվող բազմաքանակ ու բազմապրոֆիլ ակտորների մասնակցությամբ իրականացված քննարկումները թույլ տվեցին ավելի լավ տեղեկանալ տարբեր ոլորտներում առկա հետազոտական մարտահրավերներին, մոտեցումներին և փորձառություններին, ինչը կարևոր է մի կողմից համագործակցության ավելի շատ եզրեր գտնելու տեսանկյունից, մյուս կողմից մարտահրավերների հաղթահարման համար առավել արդյունավետ լուծումներ գտնելու առումով:

Ավելի շատ փոխհամաձայնություններ (կոնսենսուսներ)

Քննարկումների ընթացքում նկատելի դարձավ մի շարք հիմնախնդիրների առանձին առումների նույնականացման և հաշվառման շնորհիվ որոշակի խնդիրների շուրջ ավելի

լայն փոխհամաձայնությունների գալու միտումը: Նշվածը կարևոր պայման է դրանց լուծման ուղղությամբ համագործակցության որոշակի հարթակներ ձևավորելու հարցում:

Ավելի շատ համագործակցելու առաջարկներ

Քննարկումների ընթացքում ձեռք բերված կարևոր արդյունքներից մեկը տարբեր հիմնախնդիրների լուծման ուղղությամբ համատեղ աշխատելու և տարբեր ոլորտների հետազոտողների հետ համագործակցելու պատրաստակամությանը վերաբերող առաջարկներն են: Ընդհանուր առմամբ տարբեր հիմնախնդիրների լուծման ուղղությամբ հնչել են շուրջ չորս տասնյակ առաջարկներ, որոնցից 14-ը վերաբերում են համագործակցելու հեռանկարին: Այդ առաջարկների մեջ հատկապես արժեքավոր են այնպիսիք, որոնք հիմնված են հաջողված փորձառությունների և որոշակի անհրաժեշտ ռեսուրսներ ունենալու հանգամանքի վրա:

Ավելի բարձր ինքնանույնականացում

Մասնակիցներից շատերի համար ավելի հասկանալի և սովորական դարձավ համայնք հասկացությունը: Նրանցից մեկը, ով մասնակցել էր նաև նախորդ՝ 3-րդ ֆորումին, ոգևորությամբ խոստովանեց, որ 4-րդ ֆորումի ժամանակ «Ինձ համար ավելի հասկանալի դարձավ, թե ինչ է նշանակում հետազոտական համայք: Այդ հասկացությունը 1-ին ֆորումի ([ըստ էության, 3-րդ ֆորումի]) ժամանակ իմ համար շատ խորթ էր, նույնիսկ՝ էսօր օրվա սկզբին»:

Ավելի շատ քննարկումներ

Մտագրոհ-քննարկումների, փոդքասթի էպիզոդների և ավարտական ֆորումի բազմաթիվ մասնակիցների կարծիքով նմանատիպ միջոցառումները շատ օգտակար են ինչպես հիմնախնդիրների բարձրաձայնման ու նույնականացման, այնպես էլ ավելի արդյունավետ լուծումներ գտնելու և հետազոտական համայնքի կարողությունները մեծացնելու տեսանկյունից: Նրանք շահագրգռվածություն հայտնեցին, որ նման քննարկումները շարունակվեն և ավելի հաճախ կազմակերպվեն:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

4-րդ ֆորումի ամփոփիչ քննարկման ժամանակ ցանկություն հնչեց, որ ՀՌԿԿ-Հայաստանը իր կազմակերպած քննարկումների ընթացքում ցուցակագրած լուծումների ողջ ցանկը կիսի մասնակիցների հետ՝ առցանց կամ մեկ այլ տարբերակով: Ծրագրի շրջանակներում իրականացված մտագրոհ-քննարկումների, փողքասթի և ավարտական ֆորումի ընթացքում հնչեցվել են հետազոտական գործունեության մեջ հանդիպող հիմնախնդիրներին վերաբերող մեծ թվով առումներ, դիրքորոշումներ, մեկնաբանություններ և լուծումներ, որոնց մի զգալի մասը ունեն բովանդակային և թիրախային ընդհանրություններ: Ուստի, դրանք խմբավորվել են որոշակի կլաստերների մեջ և ներկայացվում են կլաստերների վերնագրերի ներքո: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով սույն ծրագրի բուն նպատակը, այն է՝ խթանել հետազոտական տարբեր ոլորտների և ակտորների մինչև համագործակցությունը՝ ստորև ընդարձակ շարադրանքով ներկայացվում են այն դիտարկումներն ու լուծումները, որոնք պարունակում են համագործակցության առաջարկներ կամ համագործակցության հեռանկարներ: Ըստ այդմ, հաջորդիվ կներկայացվեն հիմնականում 4-րդ ֆորումի ընթացքում քննարկված *հինգ առանցքային թեմաների* առնչությամբ ներկայացված դիրքորոշումներն ու առաջարկները, քանի որ հիմնախնդիրներն ու լուծումները, մեր կարծիքով, դրանցում առավել բազմակողմանի և հղկված են ներկայանում:

Կարևոր ենք համարում շեշտադրել, որ հիմնախնդիրները ձևակերպվել են հետազոտողների հետ խմբային մտագրոհների արդյունքում՝ ՀՌԿԿ-Հայաստանի և Ազգային ժողովրդավարության ինստիտուտի մեկամյա համատեղ ծրագրի շրջանակներում: Դրանք դուրս են բերվել մտագրոհների մասնակիցների դիտարկումներից և հիմնականում ներկայացվում են առանց խմբագրման: Դուրս բերված ձևակերպումները ունեն պայմանական/խորհրդանշանային բնույթ և պարտադիր չէ, որ միանշանակորեն համընկնեն համայնքի այլ ներկայացուցիչների ընկալումներին: Այս պարագայում առավել կարևոր են այն հարցադրումներն ու առաջարկները որոնք բխեցվում են հիմնախնդիրներից և որոնց շուրջ դրսևորվել է ընդհանուր փոխըմբռնում: Ասվածը վերաբերում է նաև ենթահիմնախնդիրներին և դրանց հաղթահարման նպատակով մասնակիցների կողմից արված առաջարկներին:

Կլոր-սեղան 1. Մեր երկրում ի սկզբանե հետազոտողի[4] մասնագիտությունը սխալ է դասավանդվում, հետևաբար խնդիրը մասնագետ կրթելու/պատրաստելու գործընթացի մեջ է

Թեմայի շրջանակում մասնակիցները նույնականացրեցին հետևյալ ենթահիմնախնդիրները.

- ուսանողների նկատմամբ ուսուցանողների սխալ դիրքորոշումը,
- հետազոտական պրակտիկաներում ուսանողների նվազ ներգրավվածությունը,
- ուսանողների շրջանում միջդիսցիպլինար գիտելիքների սակավությունը կամ բացակայությունը,
- ուսուցանողների շրջանում պրակտիկ հետազոտողների պակասը,
- ոչ ֆորմալ կրթության ոլորտում առկա բացերը,
- հետազոտողների ցածր պահանջարկը:

Թվարկված հիմնախնդիրների հաղթահարումը քննարկումների մասնակիցներին պատկերանում է հետևյալ լուծումներով և միջոցառումներով.

Փոխել ուսանողների նկատմամբ ուսուցանողների դիրքորոշումը: Անհրաժեշտ է փոխել ուսանողների նկատմամբ դասախոսների և բուհական կրթության կազմակերպիչների վերաբերմունքը: Ուսանողների մեջ պետք է տեսնել ոչ միայն գիտելիք յուրացնողների, այլև ապագա հետազոտողների: Դա նշանակում է բուհերում ուսումնառության դեռ ցածր կուրսերից հետազոտական գործունեության մեթոդների հետ ուսանողներին ծանոթացում, բուհական ծրագրերի շրջանակում հետազոտական դասընթացների և պրակտիկաների համար անհրաժեշտ ժամաքանակի և ֆինանսական միջոցների հատկացում: Ուսանողների նկատմամբ վերաբերմունքի փոփոխության դրսևորումներից մեկը կարող է լինել դասախոսի հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավումը՝ քոուչինգ (coaching) և մենթորություն անելու ճանապարհով: Քննարկումների մասնակիցները կարևորում են նաև ուսումնառության ողջ ընթացքում հետազոտական մեթոդների դասավանդումը և սեփական փոքր հետազոտությունների (նախագծերի) հիման վրա ուսանողների մինի պրեզենտացիաների պարբերական իրականացումը:

Ավելացնել հետազոտական պրակտիկաներում ուսանողների ներգրավվածությունը: Այս խնդրի լուծումը քննարկումների մասնակիցները տեսնում են մի կողմից պասիվ ճանաչողական միջոցառումների օգնությամբ, մյուս կողմից՝ որոշակի հետազոտական ծրագրերի մեջ ուսանողների ակտիվ ներգրավմամբ.

- Պասիվ ճանաչողական միջոցառումներ. պրակտիկ հետազոտական գործունեություն իրականացնող ոչ բուհական կազմակերպություններ ուսանողների այցելությունների կազմակերպում, ծանոթացում վերջիններիս գործունեության առանձնահատկությունների հետ,
- Ուսանողների ակտիվ ներգրավում. հետազոտական փոքրիկ դրամաշնորհների միջոցով, օրինակ՝ *public-private partnership-ի կամ corporate social responsibility-ի համատեքստում ուսանողական-հետազոտական գրանտների տրամադրմամբ*:

Ուսանողների շրջանում ապահովել միջդիսցիպլինար գիտելիքներ: Ուսանողները պետք է գիտելիքներ ունենան ոչ միայն իրենց նեղ մասնագիտական գիտակարգի, այլև այլ գիտակարգերի մոտեցումների ու մեթոդների մասին, քանի որ ժամանակակից հետազոտություններում գնալով մեծանում է միջգիտակարգային մոտեցումներ կիրառելու անհ-

4. Քննարկման մասնակիցներից մեկը կարևոր էր համարում հետազոտողի և վերլուծաբանի (Researcher vs analyst) տարբերակումը, քանի որ կարիք կա գիտակցելու յուրաքանչյուրի փորձագիտական գիտելիքի սահմանները ու ամենագետի դեր չստանձնելու խնդիրը: Միայն այս դեպքում կարելի է մտածել ու խոսել մասնագիտական համայնքի տարբեր հատվածների համագործակցության մասին:

ռաժեշտությունը: Այս խնդրի գոյության գլխավոր պատճառներից մեկը կայացած հետազոտողների մակարդակում միջգիտակարգային համագործակցության բացակայությունն է: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ քննարկումների մասնակիցներից մի քանիսը առաջարկում են ստեղծել մի հարթակ, որտեղ տարբեր գիտակարգերի ներկայացուցիչները հետազոտական տարբեր մոտեցումների ու մեթոդների վերաբերյալ պարբերաբար քննարկումներ կունենան, որոնցում կներգրավեն նաև ուսանողների:

Ավելացնել պրակտիկ հետազոտողների թվաքանակը դասավանդողների շրջանում: Կարևոր հիմնախնդիրներից մեկը, որն ուղղակիորեն անդրադառնում է ուսանողների հետազոտական կարողությունների զարգացման վրա՝ բուհերում պրակտիկ հետազոտական փորձառություն ունեցող դասախոսների պակասն է: Հիմնախնդրի լուծումը քննարկումների մասնակիցները տեսնում են մի կողմից դրսից (անկախ և պետական հետազոտական հիմնարկություններից) նման փորձառություն ունեցող մասնագետներ հրավիրելու և բուհական կրթական ծրագրերում ներգրավելու մեջ, մյուս կողմից՝ ուսանողների համար հետազոտական փորձառություն ունեցող մասնագետների մասնակցությամբ ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացման մեջ (ամառային-ձմեռային դպրոցներ, տարբեր ձևաչափերով հատուկ դասընթացներ և այլն): Մեկ այլ և հավելյալ լուծում կարող է լինել համապատասխան հետազոտական գիտելիքներ չունեցող ուսուցանողների համար հատուկ դասընթացների կազմակերպումը[5]:

Նույնականացնել ոչ ֆորմալ կրթության ոլորտում առկա խնդիրները և որոշարկել դրանց արդյունավետության ապահովման մեխանիզմները: Քննարկման մասնակիցները համակարծիք են, որ ապագա հետազոտողներ պատրաստելու հարցում ոչ ֆորմալ կրթությունը կարևոր այլընտրանք է բուհական կրթությանը, սակայն այդ ասպարեզում դեռևս չեն գտնվել այն մեխանիզմները, որոնք կարող են նպաստել պոտենցիալ շահառուների նույնականացմանը և նրանց մոտիվացիայի բարձրացմանը՝ դասընթացների մեջ ներգրավելու համար: Հեռանկարը այդ մեխանիզմների բացահայտման նպատակով շահագրգիռ հետազոտողների և հետազոտական կազմակերպությունների մասնակցությամբ համատեղ քննարկումներ կազմակերպելն է և համագործակցության հարթակ ստեղծելը:

Ձևավորել հետազոտողի բարձր պահանջարկ: Քննարկումների մասնակիցները ապագա հետազոտողների՝ կրթության ոլորտում առկա խնդիրները մասամբ պայմանավորում են աշխատաշուկայում հետազոտողների պահանջարկի սակավությամբ և կարծում են, որ կրթության որակը կբարձրանա, եթե պահանջարկն աճի: Ուստի, հետագա համագործակցության թեմաներից մեկը կարող է վերաբերել հետազոտողների պահանջարկի բարձրացման ուղղությամբ տարբեր առաջարկներին ու մոտեցումներին:

Կլոր-սեղան 2. Հետազոտողի քաղաքական, արժեքային, նորմատիվ, գաղափարախոսական հայացքները շատ են ազդում հետազոտության որակի վրա

Թեմայի շրջանակում քննարկումների մասնակիցները նույնականացրին հետևյալ ենթահիմնախնդիրները.

- հետազոտության նպատակների և մեթոդների ոչ բացահայտ լինելը,
- հետազոտողների կախվածությունը դոնոր կազմակերպությունների օրակարգից,
- հետազոտության որակի ոչ բավարար վերահսկողությունը:

5. Այս առումով, քննարկումների մասնակիցները ուշադրություն են հրավիրում այն հանգամանքին, որ բուհական ծրագրերի շրջանակներում դասախոսների վերապատրաստման դասընթացները հաճախ ունեն ձևական բնույթ, բացի այդ, դրանցում հազվադեպ են քննության առնվում հետազոտական մեթոդների ու մեթոդաբանությունների հետ կապված հարցերը:

Թվարկված ենթահիմնախնդիրների հաղթահարումը քննարկումների մասնակիցներին պատկերանում է հետևյալ լուծումներով և միջոցառումներով.

Նպաստել հետազոտության նպատակների և մեթոդների բացահայտ ներկայացումը հետազոտական զեկույցներում և պրեզենտացիաներում: Բազմաթիվ հետազոտական զեկույցներում և պրեզենտացիաներում հստակ կերպով չեն ներկայացվում հետազոտության նպատակներն ու մեթոդները: Սա հաճախ պայմանավորված է հանրության և նույնիսկ հետազոտական համայնքի շրջանում համապատասխան պահանջի բացակայությամբ, ինչը, ի հետևանս, հանգեցնում է բուն հետազոտության ընթացքում հետազոտական կամ գիտական էթիկային ոչ հարիր մոտեցումների դրսևորմանը: Խնդրի լուծումը քննարկման մասնակիցները տեսնում են առաջին հերթին հետազոտական զեկույցներում հետազոտության նպատակների ու մեթոդների պարտադիր, թափանցիկ և հստակ ներկայացման մեջ:

Հաջորդ կարևոր լուծումը մասնակիցները տեսնում են հետազոտական էթիկայի կրթության և ջատագովության ուղղությամբ միջոցառումների կազմակերպման մեջ (էթիկայի դասընթաց, էթիկայի հանձնաժողովի ստեղծում, էթիկայի շուրջ պարբերական քննարկումներ):

Նվազեցնել հետազոտողների կախվածության հավանականությունը դոնոր կազմակերպությունների օրակարգից: Բազմաթիվ հետազոտողներ համակարծիք են, որ իրենց կողմից իրականացվող հետազոտական ծրագրերի նպատակների ձևակերպման, երբեմն նաև կիրառվելիք մեթոդների մշակման գործընթացում իրենք անմասն են կամ ունեն շատ ձևական մասնակցություն: Երբեմն հետազոտական բաղադրիչը իրականացված ծրագրի ամփոփիչ զեկույցում ներկայացված վերջնարդյունքներում ամբողջովին ձևական նշանակություն է ունենում, ուստի և, քիչ չեն այն դեպքերը, երբ հետազոտությունն իրականացվում է ոչ փորձառու հետազոտողների կողմից և ոչ ադեկվատ մեթոդաբանությամբ: Նույն պատճառով է, որ ծրագրի ավարտական հաշվետվություններում և զեկույցներում հետազոտության բուն նպատակն ու օգտագործված գործիքները մեծ մասամբ հստակորեն չեն ներկայացվում: Ըստ քննարկումների մասնակիցների՝ որպես դոնոր կազմակերպությունների օրակարգերից կախվածությունը նվազեցնելու կամ թուլացնելու լուծումներ՝ կարող են լինել հետազոտական հայտերի ներկայացման փուլում դոնորների հետ վերոհիշյալ առումների ճշգրտումը և սեփական փորձագիտական դիրքորոշումների կարևորության հաղորդակցումը: Ենթահիմնախնդրի լուծման տարբերակ կարող է ծառայել նաև հետազոտական համայնքի այլ դերակատարների հետ համայնքի անդամների իրավունքների ու շահերի պաշտպանության նպատակով որոշակի հարթակի ստեղծումը:

Բարձրացնել հետազոտության որակի ապահովման և վերահսկողության արդյունավետությունը: Քննարկման մասնակիցների կարծիքով՝ բուն հիմնախնդրի առկայությունը զգալի չափով պայմանավորված է հետազոտության արդյունքների և առհասարակ հետազոտական գործընթացի ադեկվատության և արդյունավետության այլընտրանքային փորձագիտական գնահատման մեխանիզմների հազվադեպ կիրառման և կամ առհասարակ չկիրառելու հանգամանքով: Հետազոտության մեթոդները, ստացված արդյունքները և դրանց արդյունավետությունը հաճախ որոշում և գնահատում են հենց հետազոտություն իրականացնողները, ինչը զգալիորեն նվազեցնում է որակյալ հետազոտություն ունենալու հնարավորությունը: Այդ հնարավորությունը ավելացնելու առումով կարևոր են վերահսկողության որոշակի, շատ դեպքերում միջազգայնորեն արդեն հայտնի, այնպիսի մեխանիզմների կիրառումը, ինչպիսիք են, օրինակ, «peer review»-ն[6], «board review»[7]-ն, վերջիններս համակարգող միջինստիտուցիոնալ հարթակների ստեղծումը:

6. Փորձագիտական գրախոսություն:

7. Հանձնաժողովային (հանձնաժողովի կարգավիճակ ունեցող փորձագիտական խմբի) գրախոսություն:

Միկրոմակարդակում հիմնախնդրի լուծում կարող է լինել հետազոտական ուղեցույցներում հարցազրուցավարների կողմնակալության բացահայտման նպատակով որոշակի ցուցանիշների ներդրումը, քաղաքական և անձակենտրոն դիրքորոշումների դրսևորումները նվազեցնելու նպատակով ուղեցույցներում միջազգային կիրառում ունեցող որոշակի սանդղակների օգտագործումը, փորձնական (պիլոտային) և թեստային հետազոտությունների պատշաճ իրականացումը և այլն:

Կլոր-սեղան 3. Հետազոտական վերլուծությունները հաճախ սահմանափակվում են տվյալների «պասիվ» նկարագրությամբ՝ առանց խորքային վերլուծական մեկնաբանումների, ինչը պարարտ հող է ստեղծում տվյալների թյուրըմբռման և մանիպուլյացիայի համար:

Թեմայի շրջանակում քննարկումների մասնակիցները նույնականացրին հետևյալ ենթահիմնախնդիրները.

- քանակական հետազոտությունները չունեն ուղեկցող վերլուծություն և մեթոդաբանություն,
- որակյալ վերլուծությունների բացակայություն,
- հետազոտության արդյունքների լեզուն անհասանելի է հանրությանը, արդյունքները տարածող շահառուներին, երբեմն նույնիսկ հետազոտական համայնքի անդամներին,
- տվյալների ոչ բավարար թափանցիկությունը,
- հանրության շրջանում սոցիոլոգիայի ցածր վարկանիշը:

Թվարկված ենթահիմնախնդիրների հաղթահարումը քննարկումների մասնակիցներին պատկերանում է հետևյալ լուծումներով և միջոցառումներով.

Քանակական հետազոտություններում հանգամանալից կերպով ներկայացնել ուղեկցող վերլուծությունը և մեթոդաբանությունը: Քննարկումների մասնակիցների կարծիքով հետազոտությունների (մասնավորապես՝ քանակական հետազոտությունների) արդյունքների շահարկման և թյուրըմբռման ենթարկվելու առանցքային պատճառներից մեկն այն է, որ դրանցում բացակայում են օգտագործված մեթոդաբանությունը և ուղեկցող վերլուծությունը: Սրանց պատճառները տարաբնույթ են՝ սկսած իրականացված հետազոտության ցածր որակից, մինչև դոնոր կազմակերպության կողմից ներկայացվող պահանջի սահմանափակությունը, հետազոտության իրականացման համար նախատեսված սեղմ ժամկետները, վերջացրած լսարանին շահարկման ենթարկելու ուղղակի նպատակադրությունը: Ըստ այդմ, իբրև ենթահիմնախնդրի լուծումներ առաջարկվում են հանրայնացվող արդյունքներին զուգահեռ հետազոտության մեջ օգտագործված մեթոդների պարտադիր ներկայացումը, արդյունքների (հակիրճ կամ ընդարձակ) վերլուծական ամփոփումը, հետազոտության տարբեր փուլերի իրականացման համար ողջախոհ ժամկետների շուրջ դոնոր կազմակերպությունների հետ նախնական հստակ պայմանավորվածությունը: Ընթերցողին և հիմնական տեքստը ծանրաբեռնելուց խուսափելու նպատակով մեթոդաբանությունը և թեստերը կարելի է ներկայացնել կից հավելվածներում:

Ստեղծել մեխանիզմներ, որոնք կապահովեն որակյալ վերլուծությունների ներկայացմանը: Քննարկման մասնակիցները նկատում են, որ որոշ դեպքերում հետազոտության արդյունքներն ունեն կից վերլուծություններ, բայց որոշակի մասնագիտական չափանիշներ չպահպանելու պատճառով «դժվար է դրանք վերլուծություն համարել»: Այս պարագա-

յում նույնպես իբրև լուծում կարևորվում են peer review-ների, «review essay»-ների[8], «board review»-ների ձևավորումը. «peer review»-ն *պետք է դառնա հետազոտական բյուջեների տող՝ ինչպես ներքին հետազոտական կազմակերպությունների համար, այնպես էլ՝ պատվիրատուների: Peer review պետք է անեն ոչ թե պատահական մարդիկ, այլ մասնագետները*»:

Հետազոտության արդյունքների լեզուն հնարավորինս հասանելի դարձնել հանրությանը, արդյունքները տարածող շահառուների, ինչպես նաև հետազոտական համայնքի անդամների համար: Հետազոտության արդյունքների շահարկման ենթարկվելու և թյուրըմբռման արժանանալու առանցքային պատճառներից է դրանցում ներկայացված տվյալների և գաղափարների դժվար ապակոդավորելի լինելու հանգամանքը կամ, այլ կերպ ասած՝ նեղ մասնագիտական-ակադեմիական լեզվով շարադրանքը: Այդ պատճառով է, որ հրապարակված շատ կարևոր հետազոտություններ անհասանելի են ոչ միայն հանրության լայն շրջանակներին, այլև դրանց արդյունքները տարածող դերակատարներին (լրագրողներ, բլոգերներ, յութուբյան էջ վարողներ և այլն), անգամ հետազոտական համայնքի որոշակի շրջանակներին: Ենթահիմնախնդրի լուծումները քննարկման մասնակիցները տեսնում են մի շարք հարթություններում: Օրինակ, դրանից մեկը հետազոտության արդյունքների երկու տարբերակների հանրայնացումն է՝ մեկը արհեստավարժ (խորքային տարբերակ), իսկ մյուսը ոչ արհեստավարժ (հպանցիկ տարբերակ) լսարանի համար: Մեկ այլ առաջարկ վերաբերում է հանրության, մասնավորապես՝ լրագրողների շրջանում տվյալների գրագիտության բարձրացմանը և այդ ուղղությամբ որոշակի կրթական ծրագրերի իրականացմանը: Առաջարկվող ուշագրավ լուծումներից է նաև հրապարակված հետազոտությանը մեջ օգտագործված հասկացությունների ու մեթոդների վերաբերյալ բառարան-ուղեցույցի կցումը: Եվս մի կարևոր լուծում վերաբերում է տարբեր հետազոտական-մասնագիտական շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների և դրանց արդյունքների մասին տվյալների կիսմանը այլ շրջանակների հետ, ինչը կարող է նվազեցնել թյուրըմբռնումների հնարավորությունը՝ ի հավելումն, նպաստելով նրանց միջև համագործակցության ծավալմանը: Սրա հետ կապված՝ քննարկման մասնակիցները իբրև լուծման տարբերակ են համարում նաև արդյունքների պատշաճ հրապարակման համար անհրաժեշտ ընդհանուր գործիքակազմի և ստանդարտների համատեղ մշակումը: Քննարկումների ընթացքում հնչել է նաև հակառակ առաջարկ՝ հետազոտության արդյունքներում մեթոդի և թեստերի նկարագրությունները թեթևացնելու մասին՝ այն պատճառաբանությամբ, որ դրանք բարդացնում են արդյունքների յուրացման գործընթացը: Ըստ այդմ, դրանց ներկայացման համար լավագույն լուծում կարող է լինել առանձին հասցեով կամ էջով դրանք ներկայացնելը:

Տվյալների թափանցիկությունը դարձնել հնարավորինս տեսանալի լայն շրջանակների համար: Հրապարակված հետազոտությունների արդյունքները որոշ դեպքերում շահարկման և թյուրըմբռման տեղիք են տալիս, որովհետև դրանցում օգտագործված տվյալները հասանելի չեն շահագրգիռ լայն շրջանակներին և ունեն սահմանափակ հասանելիություն: Որոշ դեպքերում լսարանը գործ ունի պարզապես վերլուծության մեջ օգտագործվող տվյալների հետ: Ուստի քննարկման մասնակիցները կարևորում են հետազոտությունների հիմքում ընկած տվյալների հրապարակումը՝ թեկուզ առանձին տվյալադարանների տեսքով: Առանձին դեպքերում, հաշվի առնելով անվտանգության և այլ խնդիրներ՝ դրանց շրջանառությունը կարելի է կազմակերպել ներցանցային օգտագործման նպատակով ստեղծված հարթակների միջոցով:

Հանրության շրջանում բարձրացնել հասարակագիտության (մասնավորապես՝ սոցիոլոգիայի) նկատմամբ առկա ցածր վարկանիշը: Ըստ քննարկման մասնակիցների՝ շահարկման նպատակ հետապնդող և կուռ հետազոտական չափանիշների հիման վրա չիրականացված հետազոտությունները լայն սպառում և հաջողություն ունեն, որովհետև

8. Օգտագործված գրականության գրախոսություն:

հանրության շրջանում բավականին ցածր է սոցիոլոգիայի և սոցիոլոգիական հետազոտությունների վարկանիշը: Սրա պատճառները տարբեր տեղերում են, այդ թվում՝ վերը հիշատակված ենթախնդիրներում: Սակայն բուն պատճառն այն է, որ հանրության շրջանում ցածր է առհասարակ իրականությունը գիտական հետազոտության արդյունքների հիման վրա ճանաչելու հակվածությունը: Հետևապես, հանրության շրջանում իրականության ճանաչման գործում հասարակական գիտությունների, մասնավորապես՝ սոցիոլոգիայի դերի ու նշանակության ջատագովման անհրաժեշտություն կա: Նշվածը ենթադրում է հետազոտական համայնքի անդամների ակտիվ մասնակցությամբ քննարկումներ, ինչպես նաև համատեղ լուծումների մշակմանը միտված որոշակի ջանքեր: Խնդրի լուծման թեկուզ անուղղակի միջոց կարող է լինել երկարաժամկետ հետազոտությունների անցկացումը և դրա արդյունքների կիրառումը, ինչը հետազոտվող համայնքներում որոշակիորեն կնպաստի համայնքային տարբեր խնդիրների լուծմանը, այդպիսով՝ նաև հետազոտության վարկանիշի բարձրացմանը: Վերջին առաջարկը մասամբ առնչվում է նաև հաջորդ թեմայի վերնագրի տակ քննարկվող հիմնախնդրին:

Կլոր-սեղան 4. Տվյալները և հետազոտությունների ներուժը բավարար չափով չեն օգտագործվում կոնկրետ և պրակտիկ նշանակության խնդիրներ լուծելու համար

Թեմայի շրջանակում քննարկումների մասնակիցները նույնականացրեցին հետևյալ ենթահիմնախնդիրները.

- տվյալների և վերլուծությունների ընդհանուր շտեմարանի բացակայություն կամ անհասանելիություն,
- պետական անմիջական (ուղղակի) պատվերի բացակայություն,
- հետազոտողների ցածր վարկանիշ,
- հետազոտություն պատվիրակողների անհետևողականություն:

Թվարկված ենթահիմնախնդիրների հաղթահարումը քննարկումների մասնակիցներին պատկերանում է հետևյալ լուծումներով և միջոցառումներով.

Տվյալների և վերլուծությունների համար ընդհանուր շտեմարան ստեղծել, իսկ առկա շտեմարանները հասանելի դարձնել լայն շրջանակների համար: Քննարկումների մասնակիցները նշում են, որ որոշ դեպքերում հետազոտությունների տվյալներ և վերլուծություններ դժվարանում են գտնել, որովհետև դրանք չեն զետեղված ընդհանուր հասանելիություն ունեցող հասցեներում և աղբյուրներում: Սա հատկապես վերաբերում է ակադեմիական ուսումնասիրություններին: Ուրիշ դեպքերում դրանք զետեղված են, սակայն անհրաժեշտ է լինում տասնյակ առցանց պատուհաններ բացել և դրանցով դեգերել այնքան, մինչև հնարավոր կլինի գտնել փնտրվածը: Հետևաբար, որպես խնդրի լուծումներ՝ կարող են լինել տվյալների և վերլուծությունների ընդհանուր բազայի ստեղծումը կամ բանալի բառերի օգնությամբ անհրաժեշտ նյութերը հասանելի դարձնելու որոշակի համակարգի մշակումը:

Հնարավոր դարձնել պետական անմիջական (ուղղակի) պատվերների իրականացումը: Քննարկումների մասնակիցների կարծիքով տարբեր հետազոտությունների՝ այսպես կոչված՝ «դարակներում մնալու» և քաղաքականությունների հիմքում չհայտնվելու պատճառները ամփոփվում են պետական մակարդակում հետազոտությունների կարևորությունը չգնահատելու հանգամանքում: Այդ տեսանկյունից՝ օգտակար լուծումներից մեկը կարող

է լինել քաղաքականություն մշակողների և իրականացնողների հաշվետվողականության բարձրացումը, մասնավորապես՝ կոնկրետ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ նախապես պատվիրակված և իրականացված որոշակի հետազոտությունները և դրանց արդյունքներին վերաբերող հրապարակային հաշվետվությունները: Անհատական և մասնավոր նախաձեռնությամբ իրականացված հետազոտությունները քաղաքականության հետ հաղորդակցելու նպատակով օգտակար կարող են լինել նաև որոշակի բիզնես և խորհրդատվական կառույցների միջնորդությունը, որոնք ըստ այդ կառույցների ներկայացուցիչ-մասնակիցների՝ կարող են քաղաքականություն մշակողներին առավել մատչելի և արդյունավետ ներկայացնել նման հետազոտություններից ակնկալվող պետական ու հանրային օգուտները: Իրականացվող հետազոտությունները քաղաքականությունների հետ հաղորդակցելու արդյունավետ լուծումներից մյուսը կարող է լինել հետազոտական նախագծերի մշակման և իրականացման տարբեր փուլերում նախարարությունների և տարբեր գերատեսչությունների փորձագետ-ներկայացուցիչների ներգրավումը:

Բարձրացնել հետազոտողների ճանաչվածությունը: Մի շարք մասնակիցներ կարծում են, որ բազմաթիվ կարևոր հետազոտություններ քիչ հայտնի և չհաղորդակցված են, որովհետև հայտնի չեն դրանց հեղինակները, ուստի և, չկա անհրաժեշտ վստահություն նրանց նկատմամբ: Սրա պատճառը հիմնականում այն է, որ այդ հետազոտությունների հեղինակ անհատները կամ կազմակերպությունները, զբաղված լինելով հիմնականում հետազոտական նախագծերով, ժամանակ չունեն զբաղվել դրանց ջատագովությամբ: Հետևաբար, ջատագովություն իրականացնելու անհրաժեշտություն կա, որով կարող են զբաղվել, օրինակ, այդ նպատակով ստեղծված դաշնակից մեդիա կազմակերպությունները. «Կարելի է, նույնիսկ, սիթքոմներում կամ հայտնի սերիալներում մտցնել հետազոտողի կերպար»: Հետազոտողների ճանաչման և վստահելիության բարձրացման նպատակով լուծում կարող է լինել նաև վարկանիշային որոշակի սանդղակների կիրառումն ու հրապարակումը:

Հետազոտություն պատվիրակողների շրջանում բարձրացնել հետևողականության մակարդակը: Քննարկումների մի շարք մասնակիցներ հետազոտությունների արդյունքների ոչ բավարար հանրայնացումն ու հաղորդակցումը պատճառաբանում են հետազոտություններ պատվիրակող կառույցների (պետական և մասնավոր) անհետևողականությամբ: Ուստի, արդյունավետ հետազոտության չափանիշներից մեկը պիտի դառնա հետհետազոտական շրջանում դրա հաղորդակցումը և գրանցված ձեռքբերումները:

Կլոր-սեղան 5. Հասարակագիտական և հումանիտար հետազոտողները միասին ավելի լավ կարող են «տեսնել» հասարակությունը, բայց գրեթե չեն համագործակցում միմյանց հետ

Թեմայի շրջանակում քննարկումների մասնակիցները առանձնացրեցին հետևյալ ենթահիմնախնդիրները.

- Հետազոտություն իրականացնող տարբեր դերակատարների՝ միմյանց գործունեությունից ոչ բավարար տեղեկացվածությունը,
- Մեծամիտ, երբեմն «շովինիստական» վերաբերմունքը այլ գիտակարգերի նկատմամբ,
- Միջդիսցիպլինար գիտելիքների պակասը,
- Միջդիսցիպլինար հետազոտություններ իրականացնելու պատվերի բացակայությունը,
- Միջգիտակարգային հետազոտությունների արդյունավետության թերագնահատումը,
- Համագործակցության հաջողված փորձառությունների ոչ բավարար հաշվառումը,
- Միջգիտակարգային ընդհանուր պլատֆորմի բացակայությունը:

Թվարկված ենթահիմնախնդիրների հաղթահարումը քննարկումների մասնակիցները տեսնում են հետևյալ լուծումների և միջոցառումների եղանակով.

Բարձրացնել հետազոտություն իրականացնող տարբեր դերակատարների՝ միմյանց գործունեություններից տեղեկացված լինելու մակարդակը: Քննարկումների մասնակիցները կարծում են, որ միջդիսցիպլինար համագործակցության պրակտիկաների սակավությունը պայմանավորված է այլ գիտակարգերի շրջանակներում հետազոտություն իրականացնող ակտորների գործունեությամբ, նրանց կողմից իրականացվող ուսումնասիրությունների մասին նվազ տեղեկացվածությամբ: Որպես այդ ենթահիմնախնդրի լուծում՝ նրանք նախևառաջ առանձնացնում են իրականացված և իրականացվող հետազոտությունների մասին տեղեկությունների կիսումը էլեկտրոնային հասցեների միջոցով կամ միասնական առցանց հարթակ ստեղծելու և այն շահագործելու եղանակով: Շատ կարևոր է նաև տարբեր գիտակարգերի ներկայացուցիչներին ճանաչելը, նրանց հետ առերես շփումը, որի համար արդյունավետ ձևաչափ են ՀՌԿԿ-Հայաստանի կողմից քննարկումների համար ստեղծված տարբեր հարթակները:

Նվազեցնել այլ գիտակարգերի նկատմամբ մեծամիտ, երբեմն «շովինիստական» վերաբերմունքը: Ըստ տարբեր դիտարկումների՝ միջգիտակարգային համագործակցությունը խոչընդոտող գործոններից մեկն այլ գիտակարգերի նկատմամբ արհամարհական, երբեմն մերժողական վերաբերմունքն է, ինչի դրսևորումներն ակներև են ինչպես բուհական տարբեր ֆակուլտետներում, այնպես էլ որոշ հետազոտական կազմակերպությունների կողմից՝ միջգիտակարգային մոտեցումներ պահանջող հիմնախնդիրները սեփական ուժերով և միայն իրենց ծանոթ մեթոդներով հետազոտելու պրակտիկաներում: Նշված «արատավոր» պրակտիկաների հաղթահարումը պահանջում է դրանց վնասաբեր նշանակության և հետևանքների շուրջ ակտիվ քննարկումներ, որոնց արդյունքում հնարավոր կլինի մշակել և առաջարկել համապատասխան լուծումներ:

Բարձրացնել միջդիսցիպլինար գիտելիքների մակարդակը: Միջգիտակարգային համագործակցության ծավալման համար անբարենպաստ հանգամանքներից մեկը տարբեր գիտակարգերի, վերջիններիս մոտեցումների ու հետազոտական տեխնիկաների վերաբերյալ ցածր տեղեկացվածությունն է: Ըստ քննարկումների մասնակիցների՝ այս խնդրի լուծումը հնարավոր է մի շարք գործունեությունների օգնությամբ, օրինակ, ֆորմալ կազմակերպությունների կրթական ծրագրերում հումանիտար և հասարակագիտական տարբեր մասնագիտացումների, վերջիններիս բնորոշ հետազոտական մոտեցումների և մեթոդների վերաբերյալ դասընթացներին հատկացվող ժամաքանակի ընդլայնման և գիտելիքի յուրացման գնահատման մեխանիզմների խստացման միջոցով: Մեկ այլ, առավել կարճաժամկետ հեռանկարում, լուծում է ոչ ֆորմալ ձևաչափով միջգիտակարգային գիտելիքների ուսուցման նպատակով հատուկ դասընթացների կազմակերպումը:

Ստեղծել հնարավորություն՝ իրականացնելու միջդիսցիպլինար հետազոտություններ: Քննարկումների տարբեր մասնակիցներ կարծում են, որ միջգիտակարգային համագործակցության պրակտիկաների պակասը պայմանավորված է հետազոտություն պատվիրակող կառույցների կողմից նմանաբնույթ հետազոտական նախագծեր չպատվիրակելու հանգամանքով: Հետևապես, լուծումը միջգիտակարգային-կոնսորցումային հետազոտությունների պլանավորումն է, որը կխթանի համագործակցության շարունակականությունը՝ տարբեր հետազոտական խմբերի մասնակցությամբ: Լավագույն տարբերակն, այդ առումով, իհարկե, երկարատև (3 և ավելի տարիներ) հետազոտական նախագծերի իրականացումն է: Նմանաբնույթ հետազոտությունների պատվիրակողներ կարող են լինել ոչ միայն միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունները, այլև ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան, բուհական հաստատությունները, առանձին նախարարություններ, գործարար կառույցներ և այլն:

Նվազեցնել միջգիտակարգային հետազոտությունների արդյունավետության վերաբերյալ թերագնահատված մոտեցումները: Քննարկումների մի շարք մասնակիցներ միջգիտակարգային պասիվ համագործակցությունը պատճառաբանում են նմանօրինակ համագործակցության օգուտների և արդյունավետության մասին թյուր պատկերացումներով և անհրաժեշտ փորձառության բացակայությամբ[9]: Ըստ այդմ, համագործակցության տարբեր առիթների և հնարավորությունների օգտագործումը կարող է նպաստել նմանատիպ պատկերացումների չեզոքացմանը և նոր համագործակցությունների նախաձեռնմանը:

Նպաստել համագործակցության հաջողված փորձառությունների լայն հանրայնացմանը: Քննարկումների ժամանակ արծարծված ենթահիմնախնդիրներից մեկն այն է, որ տարբեր հետազոտական կազմակերպություններ այս կամ այն առիթով իրականացրել են միջգիտակարգային հետազոտություններ, որոնցում ներգրավել են տարբեր գիտակարգերի հետազոտողների: Սակայն, այդ փորձառությունները, սովորաբար, չեն հանրայնացվել և անհրաժեշտ չափով ջատագովության չեն արժանացել, ինչը կարող է խրախուսական օրինակ լինել այլ հետազոտական կազմակերպությունների և նախագծերի համար:

Ստեղծել միջգիտակարգային ընդհանուր պլատֆորմ: Քննարկումների մի շարք մասնակիցների կարծիքով՝ միջգիտակարգային համագործակցությունը կարող է թափ հավաքել, եթե լինի տարբեր գիտակարգերի ու հետազոտական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված որևէ ասոցիացիա կամ ինստիտուտ: Ուրիշ մասնակիցներ հիշեցին, որ ասոցիացիա ստեղծելու նմանատիպ փորձեր արդեն եղել են, որոնք որևէ առաջընթաց չեն արձանագրել: Ոմանց համոզմամբ էլ ապագան կոնկրետ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ ձևավորված հարթակներինն ու նախագծերինն է, ուստի անհրաժեշտ է ջանքերը ուղղել դրանց ձևավորմանը:

9. «...Տարբեր մասնագետների հետ համագործակցությունը բարդ է. քանի որ աշխարհայացքները տարբեր են, մեթոդները տարբեր են, ուստի համագործակցությունը անհաջող է ստացվում: Այլ մասնագետները այդքան էլ լավ չեն հասկանում տնտեսագիտական փիլիսոփայությունը, մտածելակերպը, որը տարիների ընթացքում է գալիս: Այս իսկ պատճառով՝ համագործակցությունը բարդ է տեղի ունենում, մասնավորապես մաթեմատիկների հետ...»
«Թվում է, թե ուսանողները հազար ոչ մասնագիտական առարկա են սովորում, սակայն դա իրենց ոչինչ չի տալիս. չեն հասկանում, թե իրենց ինչու է պետք այդ ոչ մասնագիտական սպեկտորը, չեն հասկանում, թե հետո իրենց ինչպես է օգնելու: Երկու ղեկավար ունենալու մշակույթ չկա: Ղեկավարները իրենցով են անում ասպիրանտներին. դուր չի գալիս, որ այլ մարդ իրենց ասպիրանտի հետ համագործակցում է»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

«Հետազոտական պրակտիկայի համայնք» ենթածրագրի շրջանակներում իրականացված գործունեությունների և դրանց արդյունքների վերլուծությունը փաստում են, որ Հետազոտական համայնքը հասել է մի հանգրվանի, ուր հետազոտական պրակտիկաներում առկա հիմնախնդիրները հիմնականում նույնականացված և խմբավորելի են: Առկա են դրանց լուծումներին վերաբերող բազմաթիվ առաջարկներ, ունենք նաև համայնքի ակտորների կողմից դրանք համատեղ ջանքերով լուծելու ցանկություն և պատրաստակամություն: Սակայն, առաջարկվող լուծումներում դեռևս հստակ չեն ուրվագծվում գործուն մեխանիզմները և հաջորդական քայլերը, իսկ ցանկությունն ու պատրաստակամությունը հաճախ չեն զուգորդվում կոնկրետ դերերի ու գործառույթների ստանձման մասին առաջարկներով: Սա մի կողմից պայմանավորված է լուծման մեխանիզմների հետ կապված անհրաժեշտ փորձառությունների բացակայությամբ, մյուս կողմից՝ ինչ-որ տեղ արդարացված այն մտավախություններով, որ ստեղծվող մեխանիզմները կարող են վերածվել անկախ հետազոտական գործունեությունը սահմանափակող և խոչընդոտող միջոցի, որ համակարգող-իրականացնող և վերահսկող օղակներում կարող են հայտնվել ոչ կոմպետենտ ու ոչ սկզբունքային անձինք: Ըստ Էության, նշված գործոնները համայնքի հետագա առաջընթացը և շարժընթացը պատնեշող հանգամանքներ են և կարիք ունեն չեզոքացման: Ինչպես նշվեց՝ համայնքը հասել է այն հանգրվանին, որ ունի լուծումներ, որոնց իրականացման համար անհրաժեշտություն է համապատասխան մեխանիզմների ստեղծումը և առանց որոնց առաջ գնալը անհնար է դառնում: Հետևաբար, հաջորդ փուլի գործողությունները առաջին հերթին պետք է ուղղել այդ պատնեշի հաղթահարմանը:

Մեր համոզմամբ՝ վերոհիշյալ մտավախությունները հիմնականում պայմանավորված են անհրաժեշտ արդյունավետ փորձառության բացակայությամբ և այդ բացի հաղթահարումը ինքնըստինքյան հանգեցնելու է մտավախությունների վերացմանը: Փորձառության բացը հնարավոր է լրացնել մի կողմից տեղական հաջողված փորձառությունները ցուցակագրելով, մյուս կողմից՝ «նոր հեծանիվ չհորինելու» մասին ասացվածքի խորհրդին հետևելով, այսինքն՝ միջազգային հաջողված փորձառությունները հավաքագրելով և ինտերնալացնելով: Նշվածի իրականացումը պատկերանում է հետևյալ կերպ.

1. Օգտագործելով արդեն իսկ հաջողված քննարկումների տարբեր ձևաչափերը՝ նպատակահարմար է կազմակերպել հիմնախնդիրների լուծման մեխանիզմների և դրանց համակարգման վերաբերյալ միջազգային և տեղական հաջողված փորձառություններին վերաբերող քննարկումներ:
2. Քննարկումներին առաջարկում ենք հրավիրել համապատասխան փորձառություն ունեցող կամ դրանց մասին տեղեկացված ակտորների:

3. Քննարկումներն առավել արդյունավետ կազմակերպելու համար նպատակահարմար է քննարկման թեմաներ դարձնել ոչ թե համագործակցության ավելի մեծ պլատֆորմների (ինստիտուտ, ասոցիացիա և այլն) ստեղծումը և դրանց գործունակության մեխանիզմների նույնականացումը, այլ *միասնական հայտարարություն-փաստաթղթի հիման վրա ստեղծվող* ավելի փոքր մակարդակի հարթակները, որոնք կթիրախավորեն հետազոտական պրակտիկաներում հանդիպող հիմնախնդիրների այն խմբերը, որոնց համար հնչել են համագործակցության ավելի շատ թվով առաջարկներ[10]: Այդպիսի թեմաներ կարող են լինել հետևյալները.
   - Ինչպե՞ս իրականացնել միջգիտակարգային հետազոտություններ,
   - Ինչպե՞ս ավելի արդյունավետ կազմակերպել հետազոտողների, վերլուծողների կրթությունը,
   - Ինչպե՞ս ավելի արդյունավետ դարձնել հարցազրուցավարների աշխատանքը,
   - Ինչպե՞ս կոմունիկացնել հետազոտության արդյունքները քաղաքականությունների հետ,
   - Ինչպե՞ս կոմունիկացնել և հանրայնացնել հետազոտության արդյունքներն առհասարակ,
   - Ինչպիսի՞ նոր մոտեցումներ են անհրաժեշտ հետազոտությունների և վերլուծությունների որակը բարձրացնելու ասպարեզում,
4. Յուրաքանչյուր թեմատիկ խմբում հնչեցվող առանցքային հարցերը պետք է լինեն, թե ինչպես է իրականացվելու մեխանիզմների համակարգումը, ինչպիսին պիտի լինի համակարգող մարմինը, ինչ որակներ պիտի ունենա, ինչպիսի իրավաբանական կարգավիճակ պետք է ունենա, ինչպես պետք է ձևավորվի, ինչպես պետք է իրականացվի համակարգող անձնակազմի ռոտացիան, որոնք պետք է լինեն ֆինանսական աղբյուրները և այլն:
5. Համագործակցության պլատֆորմների և մեխանիզմների շուրջ քննարկումներում կարևոր առումներից մեկը պետք է լինի հիմնախնդրի խնդրականացման և հաղթահարման ամբողջական շղթայի երևակումը, որը կներառի հիմնախնդրի նկարագրությունը, պատճառները, հաղթահարման կամ լուծման առարկան, գործիքները, ցուցանիշները, ակնկալվող միջանկյալ և վերջնական արդյունքները, հավելյալ արդյունքները, գործընթացի սուբյեկտերն ու օբյեկտները, խոչընդոտներն ու ռիսկերը:
6. Արդյունավետ կլինի ապահովել քննարկումների արդյունքների և դրանց արձագանքների լայն կոմունիկացումը և հանրայնացումը՝ օգտագործելով մեդիան, ակադեմիական տեղեկատվական ցանցերը, ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի կողմից հատուկ այդ նպատակով ստեղծած հարթակը:

10. Այդուհետ, եթե պարզվի, որ այդ փոքր հարթակներն արդյունավետ աշխատում են և կա ավելի բարձր մակարդակում դրանց գործունեությունը համակարգելու կարիք, ապա կարելի է դիտարկել ավելի բարձր մակարդակում ընկերակցություն կամ հիմնարկություն ստեղծելու հնարավորությունը:

ARMENIA

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ